

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության  
վարչության նիստի

ք. Երևան

14 մայիսի 2020թ.

Մասնակիցների ցուցակ՝

- |                        |                        |
|------------------------|------------------------|
| 1. Ալբերտ Տոնեյան      | 7. Գրիգորի Սաղյան      |
| 2. Անդրանիկ Ալեքսանյան | 8. Իգոր Մկրտումյան     |
| 3. Աննա Կարախանյան     | 9. Լիաննա Գալստյան     |
| 4. Արամ Վերդյան        | 10. Միսակ Խաչատրյան    |
| 5. Արման Ներսիսյան     | 11. Քրիստինա Հակոբյան  |
| 6. Արման Խաչատրյան     | 12. Քրիստինե Գյունջյան |

Նիստին ներկա էին նաև կազմակերպության մի շարք անդամներ:

Նիստը նախագահում էր Իգոր Մկրտումյանը: Նիստի քարտուղար ընտրվեց Աննա Կարախանյանը: Նիստի նախագահողն առաջարկեց հաստատել օրակարգը, որի վերաբերյալ հնչեցին առաջարկություններ: Արդյունքում հաստատվեց հետևյալ օրակարգը՝

Օրակարգ՝

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության ժողով հրավիրելու մասին:
2. Այլ հարցեր:

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության ժողով հրավիրելու մասին:

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ պարոն Իգոր Մկրտումյանը: Պարոն Մկրտումյանի ելույթից հետո ծավալվեց քննարկում: Քննարկման ընթացքում ներկայացվեցին տարբեր տեսակետներ ժողովի անցկացման օրվա, ժողովի օրակարգային հարցերի և հատկապես օրակարգային հարցերի քննարկման և քվեարկության համար հեռահաղորդակցության նախընտրելի միջոցների վերաբերյալ: Առաջարկություններ հնչեցին օրակարգային հարցերի քննարկումը և քվեարկությունն անցկացնել էլեկտրոնային փոստի, «Zoom» հարթակի միջոցով, քննարկումը «Zoom» հարթակի, իսկ քվեարկությունն այլ համակարգի միջոցով, դիտարկվեցին ժողովի անցկացման համար հեռահաղորդակցության այս կամ այն միջոցի առավելությունները և թերությունները՝ հաշվի առնելով կազմակերպության անդամների նույնականացման, քվեարկության գաղտնիության հարցերը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժողովում որպես օրակարգային հարց նախատեսվում է ընդգրկել կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրության նախագծի հաստատման հարցը:



Նիստը նախագահողը նշեց, որ ներկայումս իրականացվում են քվեարկության որոշ էլեկտրոնային համակարգերի փորձարկումներ: Առաջարկություն հնչեց առաջիկա վարչության նիստին փորձարկել քվեարկության էլեկտրոնային համակարգը:

Քննարկման արդյունքում կազմակերպության վարչությունը ձայների 11 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ որոշեց հանձնարարել վարչության անդամներ Իգոր Մկրտումյանին, Լիաննա Գալստյանին և Քրիստինա Հակոբյանին մեկշաբաթյա ժամկետում փորձարկել քվեարկության որոշ էլեկտրոնային համակարգեր, որից հետո ներկայացնել կազմակերպության վարչության առաջիկա նիստին:

Որոշում՝ *«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության վարչության անդամներ Իգոր Մկրտումյանին, Լիաննա Գալստյանին և Քրիստինա Հակոբյանին մեկշաբաթյա ժամկետում փորձարկել քվեարկության որոշ էլեկտրոնային համակարգեր և ներկայացնել «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության վարչության առաջիկա նիստին:*

## 2. Այլ հարցեր:

Նախ անդրադարձ կատարվեց «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ում և «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՄՊԸ-ում ֆինանսական և գործառնական աուդիտի ընթացքի մասին հարցին, որի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացրեց պարոն Արման Ներսիսյանը:

Որից հետո քննարկվեց կազմակերպության վարչության նիստերի արձանագրությունները կազմակերպության անդամներին տրամադրելու մասին հարցը՝ հաշվի առնելով նաև, որ վարչության նախորդ նիստի արձանագրությունը չի տրամադրվել կազմակերպության անդամներին: Վարչության նախորդ նիստի արձանագրությունը կազմակերպության անդամներին չտրամադրելու կապակցությամբ պարզաբանվեց, որ թեև արձանագրությունը պատրաստ է, սակայն հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում ստեղծված արտակարգ դրությունը և գործող սահմանափակումները, այն դեռ չի ստորագրվել: Ուստի, չի տրամադրվել: Տեսակետներ հնչեցին, որ անհրաժեշտ է ներդնել էլեկտրոնային ստորագրության համակարգ, ուղարկել արձանագրությունն առանց ստորագրության, սակայն պարտադիր կարգով նշելով, որ այն հաստատված է վարչության նիստի նախագահողի և քարտուղարի կողմից, իսկ ստորագրության գործընթացը կազմակերպել հետագայում:


Ինչ վերաբերում է «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթներում դոմենային անունների առաջխաղացման, ինչպես նաև այդ տիրույթներում դոմենային անունների գրանցման հետ կապված որոշ տեխնիկական հարցերին, որոնք, որպես օրակարգային հարցեր առաջարկել էր «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի վարչության անդամ Քրիստինա Հակոբյանը, ապա վերջինս առաջարկեց դրանց վերաբերյալ էլեկտրոնային նամակներ ուղարկել վարչության անդամներին և ստանալ կարծիքներ: Այդ կապակցությամբ տիկին Հակոբյանին տրվեց արձանագրային հանձնարարական:

Արձանագրային հանձնարարական՝

*«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության վարչության անդամ Քրիստինա Հակոբյանին՝ «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթներում դոմենային անունների առաջխաղացման, ինչպես նաև այդ տիրույթներում դոմենային*


անունների գրանցման հետ կապված որոշ տեխնիկական հարցերի վերաբերյալ  
ուղարկել էլեկտրոնային նամակներ կազմակերպության վարչության անդամներին՝  
վերջիններիցս կարծիքներ ստանալու նպատակով:

Նիստի նախագահող՝



Իգոր Մկրտումյան

Նիստի քարտուղար՝



Աննա Կարախանյան